

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ք. Երևան

29.01.2011թ.

Ներկա էին խորհրդի 72 անդամներից 65-ը:

Նախագահող՝ Լիազոր մարմնի ղեկավար, ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյան:

### Օրակարգում.

1. «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահի ընտրություն:
2. Ընթացիկ հարցեր:

**Ա. Աշոտյան** - Մեծարգո պարոն նախագահ, ԵՊՀ խորհրդի հարգելի անդամներ, թույլ տվեք մեկնարկել ԵՊՀ երկրորդ գումարման խորհրդի անդամիկ նիստը: Մինչ մեկնարկելը թույլ տվեք շնորհակալություն հայտնել ԵՊՀ առաջին գումարման խորհրդի նախկին անդամներին, ինչպես նաև շնորհավորել բոլորիս և ճշել, որ պատիվ է լինել Մայր Բուհի խորհրդի անդամ:

Ներկա են խորհրդի 72 անդամներից 65-ը, մենք իրավասու ենք սկսելու, իսկ օրակարգում առկա են երկու հարցեր: Եթե օրակարգի վերաբերյալ կան հարցեր, առաջարկություններ, ապա խնդրում եմ արտահայտվել: Եթե չկան, ապա առաջարկում եմ հաստատել ներկայացված օրակարգը:

Կողմ՝ 65, Դեմ՝ 0, Չեռնպահ՝ 0:

1. «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահի ընտրություն:

**Ա. Աշոտյան** - Խնդրում եմ առաջարկել ԵՊՀ խորհրդի նախագահի թեկնածուություններ:

**Է. Մինասյան** - Ես առաջարկում եմ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածությունը:

**Ա. Աշոտյան** – Շնորհակալություն թեկնածության համար, կա՞նք այլ առաջարկություններ: Չկան: Կա՞նք հարցեր պարոն Նախագահին: Եթե հարցեր չկան, ապա կարող եմք անցնել տեսակետների փոխանակմանը: Կա՞նք ցանկացողներ:

*Գրանցվեցին Ա. Ավագյանը, Ց. Ակոպյանը, Ռ. Մարտիրոսյանը, Գ. Հարությունյանը:*

**Ա. Ավագյան** – Մի կողմից համալսարանի համար պատիվ է, որ Խորհրդի նախագահ ընտրվի ՀՀ Նախագահը՝ մի մարդ, որ արդեն լավատեղյակ է համալսարանի խնդիրներին, մի մարդ, որ իր կյանքով օրինակ կարող է լինել հայրենասեր մարդու, հայրենասեր զինվորի, Հայաստան աշխարհի հոգս ու ցավով մտատանջ մարդու և մյուս կողմից կարծում եմ, որ Համալսարանն էլ առաջիկա տարիներին ունի լուծելու մի շարք խնդիրներ, և այդ գործում Սերժ Սարգսյանը կարող է սատար լինել, կողմնորոշիչ ուղեցույց մատնանշող լինել, և Համալսարան-ՀՀ Նախագահ համագործակցությունը կարող է բարեբեր, դրական դեր խաղալ ինչպես ուսանողության, պրոֆեսորա-դասախոսական կազմի, այնպես էլ, առհասարակ, հանրապետության հետագա գործունեության համար՝ ինչպես բարոյական, այնպես էլ գիտական, կրթական, ռազմական և այլ ոլորտներում:

**Ց. Ակոպյան** - Մեծարգո պարոն նախագահ, Խորհրդի հարգելի անդամներ, պատահական չէ, որ 2010թ. դեկտեմբերի 24-ին կայացած ԵՊՀ Խորհրդի նախկին գումարման վերջին նիստում համալսարանի ուսանողության անունից խնդրեցի պարոն Սարգսյանին որ նա անպայման ղեկավարի նոր գումարվելիք համալսարանի Խորհուրդը: Ուսանողության դիրքորոշումն ու խնդրանքը ուներ հստակ հիմնավորումներ, որոնք քննարկվեցին նաև մի քանի օր առաջ կայացած ուսանողական ակտիի ժողովում, որոնք ես կփորձեմ հակիրճ ներկայացնել Խորհրդի անդամներին.

Նախ, Սերժ Սարգսյանը լինելով համալսարանական քաջատեղյակ է ներհամալսարանական խնդիրներին, կրում է այն արժեքներն ու ավանդույթները, որոնք համալսարանականների տարբեր սերունդներ փոխանցել են միմյանց: Անցած հինգ տարիները ապացուցեցին, որ ուսանողությանը հուզող և համալսարանի համար կարևոր մի շարք հիմնահարցեր լուծվեցին պարոն Սարգսյանի գործունե աջակցությամբ: Չի եղել ուսանողության որևէ խնդրանք կամ նախաձեռնություն, որոնք անտեսվեն Խորհրդի նախագահի կողմից: Այս ամենի վառ ապացույցն այն է, որ այսօր

համալսարանի յուրաքանչյուր ուսանող պարոն Սարգսյանին դիտում է որպես համալսարանի զարգացման երաշխավոր:

Երկրորդ կարևոր հանգամանք կայանում է նրանում, որ պարոն Սարգսյանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Նախագահ: Մենք չպետք է կորցնենք այս հիանալի ընձեռնված հնարավորությունը: Մայր բուհը ունենալով առանձնահատուկ դերակատարություն մեր հանրային կյանքում պետք է ղեկավարի համալսարանական նախագահը դրանով իսկ ընդգծելով ԵՊՀ հատուկ առաքելությունը:

Պարոն Նախագահ, օգտվելով առաիթից, թույլ տվեք նաև հանդես գալ մեկ խնդանքով, որպեսզի հնարավորության սահմաններում առաջիկայում կազմակերպվի Ձեր հանդիպումը համալսարանի ուսանողության հետ:

Պարոն Սարգսյան, հավաստիացնում եմ Ձեզ, որ հանձինս համալսարանի ուսանողությանը դուք ունեք կազմակերպված և Ձեզ սատարող ուժ, որը պտրաստ է աջակցել Ձեզ Ձեր կողմից իրականացվելիք ծրագրերում:

**Ռ. Սարտիրոսյան** – Իրոք, Երևանի պետական համալսարանի համար մեծ պատիվ է, որ հանրապետության Նախագահը համաձայնվում է երկրորդ անգամ լինելու Խորհրդի նախագահ: Ես ցանկանում եմ այս հանգամանքին անդրադառնալ մեկ այլ տեսանկյունից: Սերժ Սարգսյանը՝ որպես Երևանի պետական համալսարանի շրջանավարտ, միայն այս վերջին տարիներին չէ, որ ցուցաբերում է իր սերը, հարգանքը, ուշադրությունը և օգնության պատրաստակամությունը ԵՊՀ-ի հանդեպ: Ավելի վաղ շրջանի մասին կոժվարանամ նշել, սակայն Երևան տեղափոխվելուց հետո պարոն Սարգսյանը միշտ հարազատ է եղել ԵՊՀ-ին, ես ծանոթ եմ նրա հարգանքին դեպի Երևանի պետական համալսարանի իր դասախոսները: Մեր համալսարանի կազմում գործում էր «Լազերային ֆիզիկա» գիտաարտադարական միավորումը, որը զարգացում ապրեց ի շնորհիվ Սերժ Սարգսյանի աջակցության և ուշադրության: Նրա ուշադրությունից չեն վրիպում նաև ընթացիկ փոքր հարցերը: Երբ մենք խոսում ենք կրթական համակարգի մասին, այն անմիջականորեն կապվում է գիտության հետ: Պետք է նշեն նաև, որ այստեղ էլ պարոն Սարգսյանը մեծ ուշադրություն է դարձնում: Ի մի բերելով այս բոլորը ցանկանում եմ ասել, որ մեր գիտակրթական համակարգի հանդեպ Սերժ Սարգսյանի ուշադրությունը թույլ է տալիս համոզված նշել, որ ևս մեկ անգամ դառնալով համալսարանի խորհրդի նախագահ, նա կօգնի հաղթահարել ժամանակակից դժվարությունների մեծ մասը: Ես նույնպես պաշտպանում եմ նրա թեկնածությունը և կոչ եմ անում կողմ քվեարկել:

**Գ. Հարությունյան** - Ես կարծում եմ, որ այսօր իմաստ չկա շեշտադրումները դնել անհատական հատկանիշների վրա: Ես չեի ցանկանա նաև ՀՀ նախագահի ԵՊՀ Խորհրդի նախագահ լինելու հանգամանքը առավել շեշտադրել համալսարանի խնդիրների լուծման համատեքստում: Այստեղ ես ավելի մեծ խորհուրդ եմ տեսնում, և Նախագահի մոտեցումները երկրի զարգացմանը հիմնարար որոշակի ընդգրկվածություն ունեն առաջնահերթությունների հստակեցման տեսանկյունից: Կարևորագույն առաջնայնություններից մեկը հայտարարվել է մտավոր ներուժի զարգացումը և օգտագործումը: ՀՀ Նախագահի համալսարանի խորհրդի նախագահ լինելու փաստը առաջին հերթին դրա վկայությունն է և այս հանգամանքը պետք է տեսնել հենց այս ծրագրային մոտեցման տիրույթում և, իմ կարծիքով, սա նախ և առաջ հենց համալսարանի համար պարտավորեցնող դեր ունի: Համալսարանը ինքը այս առաքելության մեջ իր առաջամարտիկի դերակատարությունը պետք է տեսնի այս հանգամանքով: Եթե հանրապետության նախագահը ստանձնում է ԵՊՀ խորհրդի նախագահի դերն ու դերակատարությունը, ապա համալսարանը պետք է ստանձնի այն դերն ու դերակատարությունը երկրի մտավոր ներուժի զարգացման մեջ, ինչը ակնկալվում է: Ես կցանկանայի, որ այս պարագան ևս ընդգծվեր և դառնար մեր խորհրդի և ամբողջ համալսարանի հետագա գործունեության համար լուրջ պարտավորվածություն:

**Ա. Աշոտյան** – Կա առաջարկություն սահմանափակել ելույթները: Եթե առարկություններ չկան, ապա ԵՊՀ Խորհրդի նախագահի ընտրության ընթացակարգով ամրագրված է, որ եթե Խորհուրդը այլ որոշում չի կայացնում, ապա Խորհրդի նախագահի ընտրությունը իրականացվում է բաց քվեարկությամբ: Կա՞ առաջարկություն ընտրությունը անցկացնելու փակ, գաղտնի քվեարկության միջոցով: Եթե ոչ, ապա առաջարկում եմ անցնել բաց քվեարկությանը: Քվեարկության եմ դնում ԵՊՀ Խորհրդի նախագահի ընտրության համար Սերժ Սարգսյանի թեկնածությունը:

Կողմ՝65, Դեմ՝ 0, Ձեռնպահ՝0:

## **2. Ընթացիկ հարցեր:**

**Ս. Սարգսյան** – Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ կա՞ն առաջարկություններ:

**Վ. Դուճանյան** - Ես կցանկանայի տեղեկանալ. թե արդյոք մենք քննարկելով ենք ԵՊՀ ռեկտորի ընտրության օրվա հետ կապված հարցերը:

**Ս. Սարգսյան** – պարոն Աշոտյանը տեղեկացնում է, որ համաձայն գործող օրենսդրության ռեկտորի ընտրությունների պատասխանատուն և կազմակերպողը լիազոր մարմինն է, և ՀՀ Կրթության և գիտության նախարարությունն է որոշում կայացնում մրցույթի անցկացման և դրա ժամկետների մասին:

**Մ. Հակոբյան** – Մենք քննարկելով ենք խորհրդի քարտուղարի ընտրության հարցը:

**Ս. Սարգսյան** - Ես առաջարկում եմ Դավիթ Հայրապետյանի թեկնածությունը: Կա՞ն այլ առաջարկություններ: Չկան: Կա՞ն հարցեր: Եթե հարցեր չկան, ապա առաջարկում եմ քվեարկել Դավիթ Հայրապետյանի թեկնածության համար:

Կողմ` 65, Դեմ` 0, Ձեռնպահ`0:

**Ս. Սարգսյան** - Եթե չկան այլ հարցեր, ապա առաջարկում եմ ավարտել ԵՊՀ խորհրդի նիստը:

Խորհրդի նախագահող`

Ա. Աշոտյան

29.01.2011թ.